իբր ուսուցիչ կը պաշտօնավարէ հոն, հասցնելով բազմաթիւ աշակերտներ, ինչպէս կը հաստատեն ձեռագրաց յիշատակարաններ. եւ մղում կուտայ մտաւորական շարժման բազմաթիւ ձեռագիրներու ընդօրինակութեամբ։

Աստուածատուր եպս. Մշեցի յետոյ իբր Վանահայր – Առաջնորդ Թոմարզայի կը յաջորդէ Յովհաննէսի, և Կեսարիոյ և շրջակայից կրթական և ուսումնական շարժման առաջին ռահվիրաներէն մէկը կը հանդիսանայ։

Իր հոգևոր հայրն էր «երաժիշտ եւ քաղցրաբարբառ» Խաչատուր վրդ. և ուսուցիչը՝ «կուսակրօն» Մակար վրդ., որ «գրչապետ» ալ կը կոչուի(*)։

Վաւերագիր մը (Դիւան Հայոց պատմ. Ժ. հտր. էջ 396–397) զայն ցոյց կուտայ միաբան Սեբաստիոյ Ս. Նշան վանքին 1560–1578 ի ատեանները, «այրն այն երևելի» նոր Կեսարիոյ, Թոմարզայի, Սեբաստիոյ Թերևս նաև Խարբերդի շրջանակին մէջ, ինչպէս նաև Երուսաղէմ, 1550 ական թուականներէն մինչև նոյն դարուն վախճանը մօտաւորապէս 50 տարի անխոնջ

(*) 1549 ին Գլակայ Առաջնորդ ըլլալը (Աղաւնունի Մկրտիչ եպս. **Միաբանիք եւ Այցելուք**, էջ 30) կասկածելի է։